ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 359-Ա / «25» 03 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 213-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի փետրվարի 24-ի «Թատերահամերգային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված տարածքներում երրորդ անձանց կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման գործընթացը կանոնակարգելու և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2017 թվականի մայիսի 2-ի N 246-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 213-Ա հրամանով հաստատված N 1 հավելվածում (այսուհետ՝ 1 հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) N 1 հավելվածի 4-րդ կետի 4) ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«4) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող, առանց Նախարարության միջնորդության իրականացվող կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառումների, ինչպես նաև Նախարարության ֆինանսավորմամբ գործող Կազմակերպությունների համար՝ 1,0 գործակիցը,»,

2) N 1 հավելվածի 4-րդ կետը լրացնել նոր 7-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«7) հանրապետական նշանակության, կարևոր մշակութային միջոցառումների, մշակույթի ոլորտում պետական քաղաքականության տրամաբանությունից բխող միջոցառումների համար՝ մինչև 0,5 գործակիցը»,

3) N 1 հավելվածի 5-րդ կետում «տրամադրում է» բառերից հետո լրացնել «դիմողին և» բառերը,

4) N 1 հավելվածի 5-րդ կետը լրացնել նոր 5.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ՝

«5.1. Սույն կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված գործակցի կիրառման համար դիմումի /գրության/ առկայության դեպքում Նախարարության ժամանակակից արվեստի վարչությունը ուսումնասիրում է ներկայացված ծրագիրը և առնվազն 5 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է իր եզրակացությունը միջոցառման նշանակալիության և կարևորության մասին, ինչպես նաև գնահատական սակագների նկատմամբ կիրառելի գործակցի վերաբերյալ: Նախարարության ժամանակակից արվեստի վարչությունը նախապատրաստում և Նախարարի ստորագրմանն է ներկայացնում տվյալ գործակիցը կիրառելու մասին համապատասխան հրամանի նախագիծ:»:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Invalid signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211